էր Կապան քաղաքը, գետահովտի նեղացող մասում, կապելով երթևեկությունը գետի հոսանքով վեր և վար։ Այդ հեռուները, մանավանդ, լավ երևում են Ղըրղալայի գլխին բարձրացող աշտարակի վրայից՝ երևում է Բաղաբերդը, որի միջոցով հնարավոր էր, պայմանական նշաններով և այլ ձևերով, կապ պահպանել և՛ կենտրոնական հիմնական ամրոցի, և՛ ավելի խորը սփռված դիրքերի հետ։ Ղըրղալան պսակում է մորենիներով շրջապատված կոնաձև քարալեռան գագաթը։ Մինչև այսօր կանգուն են նրա աշտարակավոր պարիսպները, նեռաձգության համար թողած աչքերով, արևելյան և արևմտյան դռներով։ Մեջտեղում ցրված են քարաշեն տների հիմքեր։ Ջրամբարի ջուրը բերված էր հեռավոր աղբյուրներից։ Բերդից ավելի արևմուտք պահպանվել է, շատ ավելի ավերված վիճակի մեջ, մի այլ բերդ— Ղըզղալան՝ Աղջկաբերդը։ Տեղական ավանդությունը ասում է, որ իշխանահայրը բնակվելիս է եղել Ղըրղալայում, իսկ նրա գեղեցկադեմ աղջիկը՝ Ղըզղալայում։ Աղջկան սիրահարված է եղել հարևան իշխանը, աղջիկն էլ նրան համակրելիս։ Բայց մի առիթով այդ իշխանը դիպած է եղել հոր պատվին, և հայրը հակառակ է կանգնել նրանց ամուսնությանը։ Աղջիկը օգնում է տղային իրեն փախցնելու։ Այս առիթով աղջկա հոր և տղայի մեջ թշնամությունը փոխվել է բացարձակ պատերազմի։ Տղայի զորքը կանգնել էր Բաղաբերդի դիմաց՝ լեռան գագաթի վրա։ Աղջիկը տեսնում է, որ նա երբեք հաղթելու չէ հորը, գաղտնի հարաբերությունների մեջ է մտնում իր հոր հետ և իր ամուսնու գիտությամբ մի կերպ համոզում է նրան իր բերդը գալու տեսակցության՝ հորը և ամուսնուն հաշտեցնելու ծածուկ նպատակով։ Սակայն այստեղ տղան հոր համառությամբ գրգռված սպանում է նրան։ Այնուհետև երկու կողմերի մեջ կռիվը երկար է տևում։ Թե՛ մեկ և թե՛ մյուս կողմից շատ մարդ է զոհվում, մեծ արյուն է թափվում։ Կռվի դաշտը, որը ձորի խորքումն է, այսօր էլ կոչվում է Ղանլի-Ղամին՝ Արյան արտ։ Աղջիկը թողնում է Ղըզղալան և տեղափոխվում Ղըրղալան։ Երկու բերդերը դարեր շարունակ վտանգի օրերին պատսպարել են իրենց պարիսպների մեջ շրջակա գյուղացիներին[30]։

Լավ ամրացված էր նաև Կապան քաղաքը։ Նրա ամուր պարիսպներն ու աշտարակներն առիթ են տվել Ստեփաննոս Օրբելյանին[31] կոչելու նրան «անառիկն ի մարդկանէ»։ Նա միայն մի կողմից էր չպարսպապատված, այնտեղ, որտեղ նա կպած էր ապառաժոտ լեռան, որտեղից «անհնարին գոլոյ մտից մարդկան»։ Թշնամին 1103 թ. միայն սուրալով և քարից քար գնալով հանկարծակի հարձակումով կարողացավ այդտեղով իջնել «ընդ մեծ աւարի հեղեղատն ի քաղաքն, զի այն վայր ոչ էր պարսպափակ»— Ջրհուտի թաղ կոչված քաղաքամասը[32], բանալ դեպի Խնձորի գլուխ բացվող դուռը և ներս թող-

---

[30] Ալիշան Ղ., Սիսական, էջ 276։

[31] Անդ., գլ. ԿԱ։

[32] Անդ., գլ. ԿԱ, էջ 334։ Հազիվ թե կարելի է ենթադրել, որ այս Ջհուտի թաղը ըստ Օրբելյանի՝ Ջհտաթաղը, հանդիսանում էր մի այնպիսի թաղ, ինչպիսիները հաճախ պատահում էին եվրոպական, մասնավորապես մերձհռենոսյան քաղաքներում—գետտո, որի սահմաններից դուրս հրեաները չէին կարող բնակվել։ Հայաստանում նման թշնամանքը հրեաների հանդեպ չկար ոչ մի տեղ։ Այդ թաղը առաջ էր եկել արևելքում տարածված այն սովորությունից, որը թելադրում էր հավատակիցներին իրար կողքի բնակվելու, մեծ մասամբ իրենց աղոթատեղի շուրջը։ Հայկական քաղաքներում նույնիսկ նկատվում է, որ միևնույն եկեղեցու ծխականները ձգտում են բնակվել հենց իրենց ծխական եկեղեցու թաղում, որը և կրում է այդ տաճարի անունը։